

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ ՀԱՅ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՁ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1967, ք. 9-10, էջ 210)

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՑ

Բագրատունին հասկնալու համար՝ կա-
րելու կը նկատենք ակնարկ մը տալ իրեն
ժամանակակից եւ զինքը կանխող իմաս-
տասիրական հոսանքներուն։ Բագրատու-
նի ապրելով 1800ի մէջ, իմաստասիրու-
թեան նկատմամբ կատարեց իր գնահա-
տանքն ու դատաստանը՝ որոնք կը յայտ-
նեն նոյն այդ մտահոգութիւնն ու խու-
զարկու միտքը՝ որ յատուկ էր գրեթէ
նոյն ժամանակի մտածող, իմացական
դասակարգին։ այսինքն, աւելի առարկա-
յականութեան ու դործնական գիտու-
թեան մը պահանջը¹։ Պահանջ մը՝ աւելի
մարդկայնական իմաստասիրութեան²։
Նոյն այս մտահոգութիւնը եւ մշակութա-
յին այս պահանջը յատկապէս նոյն այս
իմաստասիրական տեսակէտները, Բա-
գրատունիով կը սկսին մուտք գործել,
թափանցել հայ մտքէն եւ մշակոյթէն

ներս, թէեւ տարբեր նորերանգներով եւ
տեսանկիւններով։

Այս տեսակէտով Բագրատունիի երկու
իմաստասիրական դործերը, իրենց կրկին
հանգամանքներով, մին՝ թարգմանու-
թիւն եւ միւսը ինքնագրութիւն, մեզ կը
գնեն երկու կարեւոր հանգրուաններու
գիմաց։ Ժամանակագրականօրէն Բագրա-
տունիի առաջին իմաստասիրական դոր-
ծը, «Արուեստ բանական»ը կարելի է նը-
կատել, իբրեւ պատրաստական կամ ազ-
դեցութիւններու շրջան մը։ Ժամանակա-
միջոց մը, ուր Բագրատունին կատարեց
իր իմաստասիրական ուղիին ընտրանքը,
որոշելով իմաստասիրական մեկնակէտը։

«Արուեստ բանական»ի առաջին մասին
մէջ, Բագրատունին մեզի կու տայ իմաս-
տասիրութեան պատմութեան համառօտ
ներկայացում մը³։ Այս ներկայացումը

1700-1800ի մշակութային ու պատմական
ըմբռնողութիւնը կը ցոլացնէ։ Մշակոյթ
մը եւ պատմական ըմբռնում մը, որ մա-
սամբ ծնունդն էր ընկերային երկար խը-
մորումներու եւ մասամբ ժառանգութիւ-
նը իմաստասիրական երկու հակոտնեայ
զադափարախօսութիւններու։ պլատոնա-
կան եւ արիստոտելական։ Կար, սակայն,
դեռ աւելի բան մը. այս ժամանակի ի-
մաստասէրները կ'ուզէին վերջնականա-
պէս ձերբազատուիլ դպրոցական (scolas-
tique) կոչուած իմաստասիրական հոսան-
քէն, ուր առաւելապէս կ'ընկնէր Արիստո-
տէլի եւ ասոր դիւանոր մեկնիչին՝ Ս.
Թովմասի հեղինակութիւնը։

Հակա-դպրոցական այս պայքարը երե-
ւոյթ մըն էր որ կը հետաքրքրէ ամբողջ
եւրոպական իմաստասիրութիւնը։ Պէյքըն,
Տէքարթ, Նիւթոն, Լոք, Լայպնից իբրեւ
իմաստասէրներ՝ կ'արձագանգեն այս մը-
տահոգութիւնը ու կը փնտռեն նոր ուղի-
ներ։ Կը փորձեն կատարել համադրու-
թիւն մը հին ու նորայայտ իմաստասիրա-
կան տեսութիւններու միջեւ, մինչ իմաս-
տասէրներու ուրիշ խումբ մը, ձեւով մը
ժառանգները արիստոտելական - Թովմա-
յական իմաստասիրութեան, կը ջանան
«այժմէականացնել», նոր պահանջներուն
«այժմէականացնել», նոր պահանջներուն
ընդունելի լեզուով մը բա-
յարմարցնել, ընդունելի լեզուով տեսու-
ցատրել՝ իրենց վարպետներուն տեսու-
թիւններն ու կարծիքները։ Այս խումբին
թիւններն ու կարծիքները։ Այս խումբին
կը պատկանի Փրանկլիսկոս Սոաւէ, որ
երկրորդական ու առաւելապէս դաստիա-
րակչական մտահոգութենէ տարուած հե-
ղինակ մըն է, որուն իմաստասիրական
զինակ մըն է, որուն իմաստասիրական
զործերը կը թարգմանուին հայերէնի՝
Սոաւէի արժէքը կը գնէ հաւատարիմ
Սոաւէի արժէքը կը գնէ հաւատարիմ
թարգման մը ըլլալուն մէջ եւ յատկապէս
իմաստասիրութիւնը դիւրացնելու եւ ժո-
ղովրդականացնելու ճիգին մէջ։ Սոաւէի
իմաստասիրութիւնը, կ'ըսէ Քալիարի,
իմաստասիրութիւնը, կ'ըսէ Քալիարի, ի-
նչոնեցաւ երբեք հաւանութիւնը նոր ի-
մաստասիրական ձեւ մը ստեղծելու, եւ ոչ
իսկ իմաստասիրական մեծ հարցեր զին-
քը մղեցին վճռական դիրք մը բռնելու։
Աւելի ունեցած պէտք է ըլլայ այդ միա-

միտ համոզումը՝ կարենալ հաշտեցնելու
իրարու հետ փորձառապաշտ եւ զգայա-
պաշտ իմաստասէրներու վարդապետու-
թիւնները։ Ամէն պարագային, կը շարու-
նակէ Քալիարի, Սոաւէ իմաստասէրին
մօտ կայ նաեւ դրական կէտ մը, այսինքն՝
իմաստուն հափաւորութիւն մը ու բարե-
խառն դիրք մը, որով կը պաշտպանէ ինչ
ինչ իմաստասիրական տեսակէտներ՝ հա-
կառակ ուրիշներու։ իր հափաւոր եւ հա-
ւասարակշիռ փորձառապաշտութիւնը եւ
յատկապէս իր եռանդը եւ դիւրին ծաւա-
լողի յաջող յատկութիւնները, կ'արա-
զացեն ընթացքը նոր զադափարներուն,
պատրաստելով Կալուփիլի, Ռոզմինիի եւ
Ճիոպէրթիի հետ՝ իտալական մտքի ազա-
տագրումը՝ հին մտածելակերպի եղանա-
կէն⁴։ Այս վիպութիւններէն յատկ կը
տեսնուի թէ Սոաւէ յառաջապահ՝ բայց
հաւասարակշիռ ու խոհեմ իմաստասէր
մըն է՝ որ բաց է եւ գիտէ զանազանելով
ընդունելի նոյն ժամանակներու իմաստա-
սիրական մտածելակերպին նորութիւն-
ներն ու յառաջխաղացումները։ Սոաւէ կը
ջանայ միջին ճամբայ մը գտնել երկու
ծայրայեղութիւններուն միջեւ, այսինքն՝
հին դաւանաբանական անվիճելի ճշմար-
տութիւններուն եւ Լուսաւորութեան, ինչ-
պէս նաեւ զգայապաշտութեան (sen-
sisme) միջեւ։ Սոաւէի ճիշտ այս կարե-
ւոր յատկութիւններուն համար է որ Բա-
գրատունին զինքը ընտրած է շատ մը հե-
ղինակներու մէջէն, ուսումնասիրած եւ
թարգմանած է զայն։ Այս ձեւով, Բա-
գրատունիի միջնորդութեամբ՝ Սոաւէ կը
բերէ իր նպաստը հայ մշակոյթէն ներս։
Բագրատունին ալ Սոաւէի հետ կը մղէ
պայքար մը, թէեւ անուղղակի, Հինին
դէմ, ջանալով արժէքաւորել նոր մտա-

1. Հետաքրքրական ու յատկանշական է այս տե-
սակէտով 1745ի հրատարակուած Musschen-
trockի բնագիտութեան հատորին սկիզբը
գրուած անանուն «Disputatio physico-his-
torica»ին մէջ կատարուած քննադատութիւ-
նը՝ վերացական իմաստասիրութեան դէմ։
Հմտ. EUGENIO GARIN, «Storia della
filosofia italiana», vol. III, էջ 968, ed. Ei-
naudi, 1966.

2. Antonio Genovesi 1754ին խօսքը ուղղելով
իմաստասէրներուն՝ այսպէս կը գրէ. «Սկսե-
ցէք, ինչպէս, աւելի եւս մօտենալ ու միանալ
մարդկային ընկերութեան, եւ մի՛ զբաղիք
այնքան բնազանցութեամբ ու քննադատական

արուեստով։ ... իմաստասէրները միշտ կը
պատկանին մարդկային զարմին եւ կը պատ-
շաճի որ առաւելապէս մտածեն մարդոց վրայ,
քան մարդոցմէ վեր իրերու մասին»։ (Անդ,
էջ 966-967)։

3. Բնական է այս մասն ալ կը գտնուի Սոաւէի
խալ. բնագիրին մէջ։ Սակայն համեմատական
ուսումնասիրութիւնը ցոյց տուաւ թէ Բագրա-
տունի մեծ ազատութեամբ թարգմանած է այս
մասը, աւելցնելով մասեր ու պակսեցնելով
ուրիշներ։ Հետեւաբար մենք գիրքին այս մա-
սը, զուտ թարգմանութենէ աւելի բան մը կը
նկատենք, որ կը ցոլացնէ նոյնինքն Բագրա-
տունիի անձնական տեսակէտները։

4. «Le 4 letterature della Svizzera», San-
soni-Accademia, Firenze-Milano, 1968։
Յատկապէս 288-292 էջերու մէջ կը խօսի Սոա-
ւէի մասին, նկատելով զինքը թէ՛ իբր իմաս-
տասէր, թէ՛ իբր թարգմանիչ եւ դաստիարակ
եւ թէ՛ իբր մէկը՝ որ կը ջանայ ժողովրդա-
կանացնել իմաստասիրական տեսութիւնները։
5. Հմտ. Guido Calgari, անդ, էջ 291-292։

տած մեծ ընդունելութիւնը, պէտք է
երբեք չփոթէ Բաղրատունին՝ փորձառա-
պաշտ կամ զգայապաշտ յիշեալ հեղինակ-
ներուն հետ: «Զիք ինչ ի մտի մինչհեւ ե-
ղեալ ի զգայարանս...»: Արիւստոտէլական
այս իրապաշտ իմաստասիրական սկզբ-
բունքն է որ կ'ուզէ այժմէականացնել
Բաղրատունին: Եւ բանապաշտ ու զաղա-
փարապաշտ հոսանքներու մէջ, իր միակ
ապաւէնը դտած էր չափաւոր փորձառա-
պաշտ հոսանքին մէջ: Եւ իր այս դերքին
մէջ անիկա շատ հեռու է «Մատերիալիզ-
մի» իմաստասիրական ուղղութիւններէն,
ինչպէս կը կարծէ Էդ. Շ. Յարութիւ-
նեան, երբ կը գրէ. «Ենելով զգայակա-
նութիւնից, Բաղրատունին հակուում է
դէպի մատերիալիզմը, արտաքին աշխար-
հի առարկաները դիտելով իրրեւ զգայու-
թիւնների հիմքը եւ նրանց աղբիւրը»³⁰:
Մանաւանդ թէ, պատմական այս համա-
դրութեան մէջ, նկատել կու տանք թէ
Բաղրատունին շատ յստակ կերպով տե-
ղեակ է իր դերքին ու զիտէ զանազանել
զաղափարներու բովէն, չափաւոր ուղ-
ղութիւնը չափազանցէն. այսպէս ունի
խիստ խօսքեր նկատմամբ այն հեղինակ-
ներուն՝ որոնք իրենց չափազանցութիւն-
ներով պղտորեցին ճշմարտութեան վճիտ
ակերը՝ իյնալով անիմաստ զգայապաշտ-
նիւթականութեան մը մէջ: Անդրադառ-
նալով Պետրոս Պէլլի եւ Յուէնի մասին՝
այսպէս կը գրէ Բաղրատունի. «Իսկ Պե-
տրոս Պէլլ եւ Յուէնի ի զաղլիացւոց, ի
զգայապաշտ նիւթականութիւն եւ յան-
հաւատութիւն միտեալ չարաչար, խառ-
նակութեամբ լցին զմիտս իւրեանց եւ ըզ-
գիւրս, մինչհեւ բազում հանճարովի իւր-
եանց՝ յովով ուրեք ցոփաբան եւ յանճանց
իսկ հերձեալ երեւին»³¹: Նոյնպէս կ'ար-
տայայտուի Բաղրատունին Հելուետիոսի
մասին. «Անց ըստ չափի ի ջատաղովութիւն
զգայութեանց, մինչհեւ ի նիւթականու-
թիւն գթեաց եւ գթեցոյց ոչ սակաւ»³²:
Նոյն քննադատութեան կ'ենթարկուին յա-
ջորդաբար Վոլթէր, Ռուսսոյ, Տալան-
պէր, Տիտրոյ, Օլպաք:

Այս նկատողութիւններէն հը տեսնուի

Բազրատունիի նիւթապաշտ ու ծայրայեղ փորձառապաշտ իմաստասիրական գրութիւններու հանդէպ բռնած ժխտական դիրքը: ԺԸ. դարու մէջ յայտնուող իմաստասիրական երկու հակադիր հոսանքներու դիմաց, որոնք ընդհանուր տիրադատով մը կրնան ամփոփուիլ «բանապաշտ» եւ «փորձառապաշտ» անուններու տակ, Բազրատունի ջանաց միջին ճամբայ մը բռնել. հետեւիլ, այսինքն, ողջամիտ իմաստասիրութեան մը եւ արժէքաւորել էականերու առանձնաշատուկ կարգը: Բազրատունին իմաստասիրութիւնը արժէքաւորեց այնքան որքան կը յաջողէր մօտենալու կեանքին եւ առօրեայ մարդուն մտածելակերպին. զնահատեց այն իմաստասիրական ուղղութիւնը՝ որ կը գոհացնէր եւ համաձայն կը յայտնուէր «հասարակական դատողական մտքին» (sens commun): Արդարեւ ամէն ինչ որ է, էակ է. եւ այն ինչ որ ամէն բանէ առաջ կը ներկայանայ մտքին դիմաց՝ էակն է. եւ այն ինչ որ ամէն բանէ առաջ կը յղանայ միտքը, իրբեւ ծանօթագոյն իր, եւ որուն մէջ հուսկ ամէն ինչ կը լուծուի՝ դարձեալ էակն է: Այս էակը՝ մեր շուրջը ամփոփուող ամենապարզ իրականութիւնն է, եւ Բազրատունի կ'ուզէ կառչած մնալ այս ապահով հիմնաքարին:

Բազմրատունի իր խորքին մէջ եղաւ իրապաշտ իմաստասէր մը. եւ այս տեսակէտով իր դործը մեր գրականութեան պատմութեան կարեւորագոյն հանգրուաններէն մին կը ներկայացնէ: Մեր քով գրական իրապաշտ հոսանքը կը շնչոտուի ԺԹ. դարու երկրորդ կէսէն սկսեալ, նախ լեզուական դեռնի վրայ, զուտ աշխարհաբար լեզուի մը առաջարկներով³³ եւ այսպէս

30. Տե՛ս, Տեղեկագիր 8 (1964), էջ 68, Երեւան:
Առիթը պիտի ունենանք կրկին անդրադառնա-
լու այս յօդուածին շուրջ:

31. Հմտ. ԲԱԳԲԱՏՈՒՆԻ, Արուեստ բանական,
էջ 55-56:

32. 457, 48 56:

33. Արեւմտահայերէնի նկատմամբ ծաղած «լեզուապախարի հարցը», Չերազի «ընտրողական ֆերականութիւնը» կարելի է նկատել իրա-

Արլիխարեանի, Զոհրապի, Բաչալեանի, Օտեանի ճիզերով՝ կը հասնի գրական բարձրութեան: Բազրատունի իր իմաստասիրական արժէքաւորումներով՝ իրապաշտ հոսանքի դուռը բացաւ գրական արտադրութիւններուն վրայ ազդելով:

Գրականութեան մէջ իրապաշտութիւնը ծնունդ կ'առնէ «գաղափարապաշտ ու մանթրիզմի» իբր հակադիր մէկ երեւոյթը: Հետաքրքրական է նշել այս տեսակետով թէ մեր քով գաղափարապաշտ ուղղութիւններ այնքան ընդունելութիւն չեն գտած, որքան իրապաշտութիւնը: Եթէ իմաստասիրել ուզող մեր հեղինակներու մօտ կը յայտնուին կրօնական ձգտումներ կամ գերբնական իրականութիւններու շուրջ հաւաստումներ, պէտք է զանոնք չփոթել գաղափարապաշտ հեղինակներու հետ, կամ պարզապէս նկատել զանոնք «ջատադուրներ իրէսլիզմի»³⁴:

Թէ Բաղրատունիի փորձառապաշտ եւ
երբեմն զգայապաշտ հակումները կը մը-
նան իրապաշտ իմաստասիրութեան մը
սահմաններուն մէջ, յստակ կը տեսնուի
երբ ուսումնասիրենք թէ որքան է դերը
փորձառութեան եւ զգայարաններուն ի-
մաստասիրութեան մէջ։ Ժազ Մարիթէն
սուրբ Թոմասի միտքը բացատրելով կը
գրէ․ «Ս․ Թոմասի համաձայն իմաստա-
սիրութիւնը կը հիմնուի եղելութիւններու
վրայ, եւ պէտք է ընդունի եղելութիւն-
ները իբր անհրաժեշտ տուեալներ։ Իմաս-
տասիրութիւնը սկիզբ կ'առնէ զգայա-
րաններով ճանչցուած իրականութենէն,
տիեզերքի հետ ունեցած մեր նիւթական
զինովէն, եւ այս իմաստասիրութիւնը ոչ
միայն իր սկիզբը կը պարտի զգայարանը-
նեւ փորձառութեան, այլ նաեւ վախ-

ճանը՝ որ պիտի ստուգէ եզրակացութիւնները»³⁵։ Այս կէտերը, սակայն, չառաւելի մանրամասն ու ազատօրէն եւ հեղինակաւոր կերպով կը բացատրուի Ռազրատունիի «Սկզբունք ուղիղ խորհելոյ եւ բարւոք կեցոյ» ինքնագրութեան մէջ։

Եզրակացնելով՝ կրնանք ըսել, թե՛
Բաղրատունի մինչ կը գնահատէ Կալի-
լէոսը, Պէյբընը, Լոքը, Հիւմը եւ Քոն-
տիյեաքի նման զգայապաշտ իմաստա-
սէրները, չի մնար այս հեղինակներու
ծիրին մէջ, այլ հեռանալով ասոնց
խիստ եզրակացութիւններէն՝ կը քննա-
դատէ բոլոր այն իմաստասէրները՝ որոնք
մեկնելով փորձառական տուեալներէն,
յանդած են անիմաստ նիւթապաշտու-
թեան մը, առանց շունչ տալու մտքի
սլացքներուն՝ որ անհրաժեշտօրէն կ'ուզեն
կատարել անցքը (Uebergang-ը) փորձա-
ռականէն, զգայականէն, տեսանելիէն
դէպի անտեսանելին եւ անզգալին։ Եւ ար-
դարեւ առանց այդ անցքին կարելի պիտի
չըլլար իմաստասիրել, որովհետեւ իմաս-
տասիրութեան ամենակարեւոր տուեալը
ըլլալը (l'être), երեւութական եւ զգա-
յական նկարագրութեան ենթակայ չէ,
այլ կը յայտնուի մեր անդրադարձու-
թեան մէջ (réflexion), որ տեղի կ'ունե-
նայ, տուեալ զգայական երեւոյթը ընդու-
նելէ ետք՝ կարենալ զայն գերազանցելու
մէջ³⁶։

Հետեւաբար երբ Բագրատունի կ'ընդունի սկզբունքը թէ «Ձեք ինչ ի միտս մ'ինչչեւ եղեալ ի զգայութեան», իրապաշտ հոսանքն է որ կը վերապրեցնէ եւ ոչ փորձառապաշտ կամ նիւթապաշտ ուղղութիւնները :

Հ. ՌԱՓԱՅԷԼ ԱՆՏՈՆԵԱՆ

Savoir», Desclée, Paris, 1932, 49 102:

36. L'être ne se livre pas à la description phénoménologique, mais à la réflexion métaphysique sur l'acte par lequel, justement, l'esprit, en dépassant le phénomène, lui confère sa signification et sa consistance». JOSEPH DE FRANCE, «Connaissance de l'être», Desclée, Paris, 1966, 49 34:

Հասանքի առաջին ազդեակներէն մին:

[illegible]

34. Բնակչության ընդհանուր թիվը՝ 1000 հոգու համար՝ 1000
Թիւնեան, իր վերը յիշատակուած ցանկի մէջ
հիշատակուած Տեղեկագիր հասարակական գիտու-
թեան տե՛ս՝ 67. Երեւան:

35. JACQUEE MARITAIN, «Les degrés du